



[234533]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» ապրիլ 2017 թ.

N 72-Ն/1


ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄԻ ՍԱՅՆԱԿՆԵՐԸ  
ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով, հաշմանդամի սայլակների տրամադրման գործընթացը հավաստագրերով կազմակերպելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող հաշմանդամի սայլակներ ձեռք բերելու համար համապատասխան հավաստագրեր տրամադրելու գործընթացի ամբողջական նկարագրությունը ներկայացնելու, այդ գործընթացի լիարժեք ներդրման մեխանիզմները մշակելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի.
2. Աշխատանքային խմբին՝ մինչև մայիսի 25-ը.
  - 1) Մշակել ՀՀ ԱՍՀՆ կարիքների համար պետական բյուջեի շրջանակներում հաշմանդամի սայլակներ ձեռք բերելու համար համապատասխան հավաստագրեր տրամադրելու գործընթացի ամբողջական նկարագիրը և ընթացակարգերը,
  - 2) վերհանել սույն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով մշակված ընթացակարգերից բխող ռիսկերը՝ ներկայացնելով դրանց կառավարման մեխանիզմները՝ ուսումնասիրելով հաշմանդամի սայլակները հավաստագրերով կամ այլ մեխանիզմներով տրամադրելու առանձնահատկությունների միջազգային փորձը,
  - 3) ներկայացնել առաջարկություններ հավաստագրերի գնային արժեքի վերաբերյալ՝ անհրաժեշտության դեպքում հաշվի առնելով հաշմանդամի սայլակի կարիք ունեցող անձի առողջական, տարիքային, ֆիզիոլոգիական և այլ առանձնահատկությունները,

- 4) քննարկել հաշմանդամի սայլակի ժամանակավոր կարիք ունեցող և 1-ին խմբի հաշմանդամություն չունեցող անձանց սայլակներ տրամադրելու հարցը և ներկայացնել առաջարկություններ՝ հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների և բարեգործական կառույցների հնարավոր աջակցությունը:
3. Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետին և գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժնի պետին՝ սույն հրամանի 2-րդ կետի 1-ին և 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված առաջարկություններն ստանալուց հետո 10 օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություն հավաստագրերի գնային արժեքի վերաբերյալ:
4. Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետին՝ սույն հրամանի 2-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերով և 3-րդ կետով սահմանված առաջարկություններն ստանալուց հետո՝ մինչև հունիսի 15-ը մշակել «Հաշմանդամի սայլակների ձեռքբերման համար պետական հավաստագրերի տրամադրման, դրանց գնային արժեքի որոշման և պետական հավաստագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:
5. Նախարարի մամուլի քարտուղարին՝ պարբերաբար իրականացնել աշխատանքային խմբի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ հանրային իրազեկում:
6. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Զ. Բաղդասարյանին:



Վ. ԱՍԱՏՐՅԱՆ

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ**

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Արթուր Կետոյան - ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայկ Մկրտչյան - ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության, հաշմանդամների հիմնահարցերի բաժնի առաջատար մասնագետ

Քրիստինե Ստեփանյան - ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության, հաշմանդամների հիմնահարցերի բաժնի առաջին կարգի մասնագետ

Լևոն Գրիգորյան - ՀՀ ԲՍՓ գործակալություն, վնասվածքաբան օրթոպեդ

Արամ Խաչատրյան «Հանգրվան» ՊՈԱԿ-ի իրավաբան

Արմեն Ալավերդյան - «Ունիսոն» ՀԿ-ի նախագահ (համաձայնությամբ)

Սուրեն Մաղաքյան- «Լիարժեք կյանք» ՀԿ-ի նախագահ (համաձայնությամբ)

Աշոտ Մկրտչյան - «Սկարպ» ՀԿ-ի նախագահ (համաձայնությամբ)

Լևոն Ներսիսյան - «Աստղիկ» ՀԿ-ի նախագահ (համաձայնությամբ)

Հունան Հունանյան-

«Սատար» հաշմանդամների ՀԿ-ի  
նախագահ (համաձայնությամբ)

Գոհար Նավասարդյան-

«Փյունիկ» ՀԿ-ի ներկայացուցիչ  
(համաձայնությամբ)